

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆ
(ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ)
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Երևանի պետական համալսարան

Դասընթացի ծրագիր

Ֆակուլտետ՝ Արևելագիտության

Ամբիոն՝ Թյուրքագիտություն

դասընթաց՝ Ժամանակակից թուրքերեն (ոչ մասնագիտական հոսքերի համար)

Որակավորման աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

Հեղինակներ՝ Անի Սարգսյան, բ.գ.թ., ասիստենտ

Անուշիկ Մարտիրոսյան, բ.գ.թ., դասախոս

Տաթևիկ Հակոբյան, դասախոս

Նաիրա Պողոսյան, դասախոս

Դասընթացը վարողի մասին տվյալներ

Դասընթացը վարում է՝ բանասիրական գիտությունների թեկնածու, թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ Անի Սարգսյանը:

Փոստային հասցեն՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն

Էլ. փոստի հասցեն՝ ani_sargsian@yahoo.com

Կայքը համացանցում՝ <http://yerevan.academia.edu/AniSargsyan/>

Աշխատանքային հեռ.՝ 060 710 580

Խորհրդատվությունների օրերը՝ նախնական պայմանավորվածությամբ

Ակադեմիական կենսագրությունը՝

2015թ. բանասիրական գիտությունների թեկնածու

2005-2010թթ. ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի հայցորդ

2003-2005թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության մագիստրատուրա

1998-2002թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բակալավրիատ

Աշխատանքային փորձը՝

2015 թ.-ից ցայսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ

2015թ-ից ցայսօր Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ուսումնասիրության և նկարագրության բաժնի ավագ գիտաշխատող

2010թ.-ից ցայսօր ԵՊՀ Հայագիտության հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչությունների բաժնի գիտաշխատող

2010-2015թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս

Դասավանդվող այլ առարկաներ՝ թուրքերեն, օսմաներեն

Հետազոտական ուղղությունը՝ օսմանյան շրջանի գրականության պատմություն, թուրքերենի լեզվի պատմություն

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ օսմաներեն ձեռագրերի ուսումնասիրություն, օսմանյան շրջանի փաստաթղթերի վերծանություն, վերլուծություն

Դասընթացը վարողի մասին տվյալներ

Դասընթացը վարում է՝ բանասիրական գիտությունների թեկնածու Անուշիկ Մարտիրոսյանը:

Փոստային հասցեն՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն,

Էլ. փոստի հասցեն՝ anushikmartirosyan@yahoo.com

Կայքը համացանցում՝ <https://yerevan.academia.edu/AnushikMartirosyan>

Աշխատանքային հեռ.՝ 060 710 580

Խորհրդատվությունների օրերը՝ նախնական պայմանավորվածությամբ

Ակադեմիական կենսագրությունը՝

2015թ. բանասիրական գիտությունների թեկնածու

2011-2015թթ. ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի հայցորդ

2008-2010թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության մագիստրատուրա

2004-2008թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բակալավրիատ

Աշխատանքային փորձը՝

2012 թ.-ից ցայսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս

Դասավանդվող այլ առարկաներ՝ թուրքերեն, օսմաներեն

Հետազոտական ուղղությունը՝ նորագույն շրջանի թուրքական գրականություն

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 1960-80-ական թթ. Թուրքիայի Հանրապետության պատմության ուսումնասիրություն, քաղաքական վեպի պատմություն, փաստագեղարվեստական ստեղծագործությունների համեմատական-տիպաբանական և գաղափարական-կառուցվածքային վերլուծություն:

Դասընթացը վարողի մասին տվյալներ

Դասընթացը վարում է՝ թյուրքագիտության ամբիոնի դասախոս Տաթևիկ Հակոբյանը:

Փոստային հասցեն՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն,

Էլ. փոստի հասցեն՝ tatevik.hakobyan@ysu.am

Կայքը համացանցում՝ <https://yerevan.academia.edu/TatevikHakobyan>

Աշխատանքային հեռ.՝ 060 710 580

Խորհրդատվությունների օրերը՝ նախնական պայմանավորվածությամբ

Ակադեմիական կենսագրությունը՝

2011թ-ից. ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի հայցորդ

2009-20011թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության մագիստրատուրա

2005-2009թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բակալավրիատ

Աշխատանքային փորձը՝

2012- ից ցայսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս

Դասավանդվող այլ առարկաներ՝ թուրքերեն

Հետազոտական ուղղությունը՝ թուրքական պատմագրություն

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Օսմանյան կայսրության պատմություն, հայկական թեմատիկան ժամանակակից թուրքական պատմագրության մեջ

Դասընթացը վարողի մասին տվյալներ

Դասընթացը վարում է՝ թյուրքագիտության ամբիոնի դասախոս Նաիրա Պողոսյանը:
Փոստային հասցեն՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն

Էլ. փոստի հասցեն՝ nairapoghosyan@ysu.am

Աշխատանքային հեռ.՝ 060 710 580

Խորհրդատվությունների օրերը՝ նախնական պայմանավորվածությամբ

Ակադեմիական կենսագրությունը՝

2011-2015 թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա

2009-2011 թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության մագիստրատուրա

2004-2009 թթ. Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ , դիպլոմավորված մասնագետ

Աշխատանքային փորձը՝

2011 թ.-ից ցայսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս

2011-2012 թթ. Կովկասի ինստիտուտ, թուրքերենի դասախոս

2013-2014 թթ. «Հայ ասպետ» դպրոց, թուրքերենի ուսուցչուհի

2013 թ.-ից ցայսօր «Արևելք» գիտահետազոտական կենտրոնի փորձագետ

Դասավանդվող այլ առարկաներ

Թուրքերեն

Հետազոտական ուղղությունը՝ թուրքական սփյուռքի գրականություն

Գիտական հետաքրքրությունների շրջանակը Եվրոպայի թուրքական սփյուռք, Թուրքիայի ազգային փոքրամասնություններ

Դասընթացի նպատակը

Դասընթացը նախատեսված է արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության և իրանագիտության բաժինների բակալավրիատի չորրորդ կուրսի ուսանողների համար: Դասընթացի հիմնական նպատակն է՝ ուսանողներին տալ թուրքերենի մասին ընդհանուր պատկերացում՝ ապահովելով լեզվի իմացության տարրական մակարդակ:

Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ◆ կտիրապետի թուրքերենին (**Ա1** մակարդակ)
- ◆ կդրսևորի թուրքերենով պարզ տեքստեր թարգմանելու կարողություն
- ◆ կկարողանա վարել երկխոսություններ
- ◆ կցուցաբերի թուրքերենով հաղորդակցվելու որոշակի հմտություններ

Դասընթացի նկարագիր

Դասիչ	Կրեդիտ քանակ	Լսարան. ժամ	Ընդհ. ժամ.	Ինքն. ժամ.	Շաբաթ. ժամ	Կիսամ
	2	64	90	26	4	7/8

Դասավանդման և ուսումնառության ձևերը

Դասընթացի տևողությունն է 1 կիսամյակ: Դասընթացը բաժանված է 2 ուսումնական հատվածի, որոնցից յուրաքանչյուրի ավարտին նախատեսված է ընթացիկ (միջանկյալ) քննության հանձնում: Դասերը կրում են գործնական բնույթ:

Ղասարաշխման սանդղակը ըստ թեմաների և պարապմունքի ձևերի

Առարկայի թեմաներ	միայն ակադ/ ժամ	դասախ ակադ/ ժամ	սեմին. ակադ/ ժամ	աշխ. այլ ակադ/ ժամ
Մաս 1	32			
Թուրքերենի այբուբենը		2		
Հոգնակի թիվ		2		
Ածական անուն		2		
Անվանական ստորոգյալ		4		
Դերանուններ		2		
Թուրքերենի հոլովական համակարգը		4		
Պատկանելիության ածանցներ		4		
Var/yok անունները թուրքերենում		2		
Բայի անորոշ ձևը, հրամայական եղանակ		4		
Ներկա- շարունակական ժամանակաձև		6		
Մաս 2	32			
Թերի օժանդակ բայի անցյալ կատարյալ ժամանակաձևի միջոցով կազմվող անվանական ստորոգյալ		4		
İle հետադրություն		2		
Անցյալ կատարյալ ժամանակաձև		4		
Գոյականների կապակցության առաջին ձև		2		
Ածականի համեմատական և գերադրական աստիճանների արտահայտումը		2		
Ժամանակի որոշումը ըստ ժամերի և րոպեների		4		
Ապառնի ժամանակ		6		

Գոյական անունների կապակցություններ		4		
Dik -ով բայանուն, մակբայներ		2		
Նպատակի պարագա, Ki ստորադասական շաղկապը		2		
Ընդամենը	64			

Բաժինների և առարկայական թեմաների բովանդակությունը

Թուրքերենի այբուբեն. Ներածական դասախոսություն թուրքական լեզվաընտանիքի վերաբերյալ: Թուրքերենի հնչյունական համակարգը: Ձայնավորների ներդաշնակության կանոն: Խուլ և ձայնեղ բաղաձայններ:

Հոգնակի թիվ. Հոգնակի թվի կազմության առանձնահատկությունները թուրքերենում:

Ածական անուն: Ածականի խոսքամասյին առանձնահատկությունները, կիրառության ձևերը:

Անվանական ստորոգյալ: Անվանական ստորոգյալի հաստատական, հարցական, ժխտական և հարցաժխտական ձևերի կազմությունը:

Դերանուններ. Անձնական, հարցական, ստացական դերանունների կիրառությունը թուրքերենում:

Թուրքերենի հոլովական համակարգը. Ներգոյական, տրական, բացառական, հայցական հոլովների կազմությունը:

Պատկանելիության ածանցներ. Թուրքերենում պատկանելիության ածանցների կազմությունն ու առանձնահատկությունները:

Var/yok անունները. Var/yok անունների կիրառության շրջանակը

Բայի անորոշ ձևը. Անորոշ դերբայ, ժխտական –ma, -me մասնիկները, հրամայական եղանակի կազմությունը

Ներկա-շարունակական ժամանակաձև. Թուրքերենի ներկա-շարունակական ժամանակաձևի հաստատական, հարցական, ժխտական և հարցաժխտական ձևերի կազմությունը, կիրառության առանձնահատկությունները

Թերի օժանդակ բայի անցյալ կատարյալ ժամանակաձևի միջոցով կազմվող անվանական ստորոգյալ. Անցյալ ժամանակում անվանական ստորոգյալի կազմությունն ու առանձնահատկությունները

Ու հետադրություն. Ու հետադրությամբ միջոցի անուղղակի խնդրի, գործիական հոլովի արտահայտման ձևերը թուրքերենում

Անցյալ կատարյալ ժամանակաձև. Թուրքերենի անցյալ կատարյալ ժամանակաձևի հաստատական, հարցական, ժխտական և հարցաժխտական ձևերի կազմությունը, կիրառության առանձնահատկությունները

Գոյականների կապակցության առաջին ձևը. Սեռական հոլովի կազմությունը, հատկացուցիչ հատկացյալ հարաբերակցությունը թուրքերենում:

Ածականի համեմատական և գերադրական աստիճանների արտահայտումը. Ածականների բաղդատական և գերադրական աստիճանները և համեմատությունը արտահայտելու այլ միջոցները թուրքերենում:

Ժամանակի որոշումը ըստ ժամերի և րոպեների. Թուրքերենում ժամանակը արտահայտող կառույցների կազմությունը:

Ապառնի ժամանակ. Թուրքերենի ապառնի ժամանակաձևի հաստատական, հարցական, ժխտական և հարցաժխտական ձևերի կազմությունը, կիրառության առանձնահատկությունները:

Գոյական անունների կապակցություններ. Գոյականների կապակցության երկրորդ, երրորդ և շղթայական ձևերը:

Ընդհանուր բայանուն, մակբայներ. Ժամանակի պարագայի արտահայտումը թուրքերենում, մակբայներն ու մակբայակերտ ածանցները:

Նպատակի պարագա, Ki ստորադասական շաղկապը. Նպատակի պարագայի արտահայտման ձևերն ու *ki* ստորադասական շաղկապի կիրառության ոլորտը:

Գրականության ցանկ

Գրականությունը հասանելի է ԵՊՀ գրադարանից, ինչպես նաև համացանցից: Որոշ նյութեր կտրամադրվեն դասավանդողների կողմից:

1. *Մաֆարյան Ալ., Սողոմոնյան Աշ., Լորնազյոզյան Տ.*, Թուրքերենի դասագիրք: Գիրք Ա, Երևան, Տիգրան Մեծ, 2015:
2. *Щека Ю.*, Интенсивный курс турецкого языка, Москва, “Восток-Запад”, 2008:
3. *Гениш Э.*, Турецкий язык в упражнениях, Москва, 2013.
4. *Yılmaz H., Sozer Z.*, Yabancı Dilim Türkçe, cilt 1-2, İstanbul. 2007.

Դասընթացի օրացույց

Դասընթացը նախատեսված է իրականացնել աշնանային/գարնանային կիսամյակի ընթացքում, շաբաթական չորս ակադեմիական ժամով: Դասընթացի օրացույցը համաձայնեցված է ԵՊՀ կողմից ընդունված ժամանակացույցի հետ:

Ստուգման և գնահատման եղանակները

Ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ձևերը

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
81-100	2
61-80	1
60 և պակաս	0

Ուսումնական այս մոդուլից ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝ ա) դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր, բ) 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների (գրավոր աշխատանք) արդյունքներից (Քընթ.), որոնց հատկացվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է 4: Առաջին ընթացիկ քննությունը բաղկացած է չորս հարցից: Յուրաքանչյուր առաջադրանքի ստուգման արժեքը գնահատվում է 1 միավոր, իսկ գնահատման քայլն 0,5 է: Երկրորդ ընթացիկ քննությունը բաղկացած է չորս հարցից: Յուրաքանչյուր առաջադրանքի ստուգման արժեքը գնահատվում է 1 միավոր, իսկ գնահատման քայլն 0,5 է: Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10

միավոր և բաղկացած է 4 առաջադրանքից՝ երկու քերականական հարց յուրաքանչյուրը 2 միավոր, թուրքերենից հայերեն և հայերենից թուրքերեն թարգմանություն՝ յուրաքանչյուրը 3 միավոր: Դասընթացի արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ \text{ արդ.} = Գ \text{ մաս.} + \Sigma \text{Քընթ.} + \text{Քեզր.} :$$

Ըստ այդմ, դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Գնահատման բաղադրամասը	Գմաս.	Քընթ.1	Քընթ.2	Քեզր	Գարդ
Միավորը	2	4	4	10	20

Գնահատման սանդղակը և նշագրումը

Ըստ ԵՊՀ-ում ընդունված կարգի՝ ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար
0	Չներկայացած
-	Ստուգված/Չստուգված

8-ից ցածր արդյունարար միավոր ստացած կամ Չստուգված գնահատված ուսանողին, կրեդիտներ չեն տրվում: